

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

“ 14 ” սեպտեմբերի 2011թ

№ 135 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ և 68-րդ հոդվածների դրույթներով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով, համաձայն ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 202-Ն որոշմամբ ընդունված կարգի և մարզպետարանի համակարգի փակ բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունների պահանջների որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2010 թվականի ֆինանսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների չափը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ մինչև 2011 թվականի հոկտեմբերի 1-ը, սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել շահութաբաժնի առկա պարտավորությունը:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ

2011թ. սեպտեմբերի 14
ք. Կապան


Հավելված
 ՀՀ Սյունիքի մարզպետի
 2011թ. սեպտեմբերի 14-ի N 135 Ա որոշման

Ց Ա Ն Կ

2010թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով ՀՀ պետական բյուջե շահութաբաժին վճարող փակ բաժնետիրական ընկերությունների (համաձայնեցված ՀՀ ֆինանսների նախարարության հետ)

N	ՓԲԸ անվանումը	ՀՀ 2011թ. պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարի չափը (հազ. դրամ)
1	«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	960.0
2	«Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	25.2
3	«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ	320.0
4	«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ	197.0
5	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	748.5
6	«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ	83.0
7	«Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ	17.0
8	«Տաթևի առողջության կենտրոն» ՓԲԸ	61.5
9	«Վերիշենի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ	213.5
10	«Դարբասի առողջության կենտրոն» ՓԲԸ	14.5
11	«Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ	12.0
12	«Նորաշենիկի ԱԱՊԿ» ՓԲԸ	10.4
13	«Բռնակոթի ԱԱՊԿ» ՓԲԸ	20.0
14	«Գորայքի ԱԱՊԿ» ՓԲԸ	4.0
15	«Տեղի ԱԱՊԿ» ՓԲԸ	140.0
16	«Շինուհայրի ԱԱՊԿ» ՓԲԸ	48.8
17	«Խնձորեսկի ԱԱՊԿ» ՓԲԸ	150.0

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝



Բ. Ղազարյան